

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲՈՒՆՈՒԹԻՐԱԿԱՆ -ԳԻՏԱԿԱՆ -ԲՈՐՈՅԵԱԿԱՆ

1346-1342

ՀԱՅՈՐ

24

1926

ՀՈԿՏԵՄԲՐԵՐ

Թիւ 10

Ա. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՀԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԱՅՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ԼՈՒՍԱԽՈՐՉՔԻՆ ՑԱՌԱՋ

(Ծարութակութիւն, տես բազմավէպ 1926, էջ 257)

13. Եթէ ուշղրութեամբ քննենք Գիւտ նշանակութեացը, պիտի համոզուինք՝ որ անոր շարադրութեան ժամանակ՝ դեռ անյայտ ու շարադրութեամբ իւկ անծանօթ էր գերեզմանը, զոր անորոշութեամբ շրջապատած է նա, չտալով ոչ մէկ տեղեկութիւն՝ որ պատմական հանգամանց մը կազմէր անոր մասին կ'ըսէ՛ թէ շատ օրեր կը տօնախմբեն Հայց այդ հրաշալի պատահարը, «և առնուին մասն ի նշխարաց սուրբ առաջելոյն թաղէսիք և Սանդղխոյ և յայլոց վկայից»։ և տուեալ փառ Աստուծոյ զնացին յիւրաքանչիւր տեղին խնդութեամբ՝ բայց հասարակ բացարձութիւն մ'է այս զոր կը կարդանց, և կը կարդար զրոյդ ալ, բոլոր վկայարանութեանց մէջ՝ կ'ըսէ՛ առաջ առայ միոյ փոքրիկ բւրոյ» որ կրկնուելիացը, պիտի համոզուինք՝ որ անոր բարձրաւանդակ տեղի մի ի վիմամշջաւ»։ և իրք գերեզմանատեղի կը նշանակէ «արածան մը անտաշ» կամ «վէմն» որ կը պատոի⁵, նյոնպէս վկայարանութենելեա. և կ'իրթան «ի տեղին» կամ «ի նշանաւոր սրբոց հանգիւած»։ Եւ այդ բոլոր վկայութեանց մէջ բնաւ չկայ ցուցումն որոշեալ ու հասարակաց ծանօթ հանգստարանի մը, ոչ առանձին մէծաբանց մ'անոր հանգէպ, ոչ ալ կառուցումն մատրան մ'անոր գրայ։ որ այդ գարերու սովորութեամբ ստիպուգական էր, և գերեզմանին յայտնութեան հետեւանքը պիտի լինէր. այլ բոլորը կը

1772

Digitized by A.R.A.R.

ցրուին կ'երթան անփութութեամբ: Ո՞չ, Գիտին հեղինակն ինքնին տեսած չէր անոր գերեզմանը՝ որ չկար. և իւր շարադրութիւնը՝ թաղէի առարկելութեան համբաւին ոյժ տալու հնարք մ'էր միայն:

Ալդէն երկուասանից Յուղա-թաղէսուը, որ ըստ պատմութեան տեսած չէր զհայատան, և հետի էր նախամիջնադարեան հայութեան մտցէն ալ, և եղիսացլոց Աղդէ-թաղէսուը, որ եթէ եղած իսկ համարինց, անոնց բով վախճաներ ու թաղուեր է անոնց հնազոյն աւանդութեան համեմատ, ուսկից ճանչցան և մեր հարք անոր խախուտ անձը, ոչ ոք աղոցմէ կարող էր ըստ բնական օրինաց՝ երկրորդ գերեզման մ'ունենալ հայ հոդին վրայ:

14. Մեր հին մատենագրութեան մէջ չենց գտներ թաղէսուի ընդ Հայաստան սփոռած նշխարաց յիշտառին ալ: Միջին դարն ուներ ու կը մեծարէր զանազան մատունցներ իւր զվարոր սրբավայրերուն մէջ: Թարրոն Տաթէսի եկեղեցւոյն մէջ կային՝ ըստ պատմէին Սիւնեաց՝ «Նշխար մեծին Յովկաննու և Ստեփանոսի նախավկային և մետասան առաքելոցն և սրբոյն Գրիգորի, և աջ սրբոյն Հոգիսիմեայ» և այլ շատեր¹: Թովմա Արծրունույն շարունակողը կը գրէ՝ թէ իրը 1113ին Աղթամարայ մէջ ալ կը պատուէին «զաթոռ մերոյ սուրբ Լուսաւորչին... և զսեղանն սրբարար աստուածային խորհրդոյն, և զգօտի սուրբ միջոյն..., և զհողաթափս աշխատասէր սուրբն սուրբ Կուտին Հորիսիմեայ, և զփողապատն ներկեալ սուրբ արեամբն, և զբացուկ սուրբ մարտիրոսին տղային Արդլմսեկի²» և այլն: Մի և նոյն ժամանակին Վարդան՝ Լուսաւորչի և Հորիսիմեայ այլ նշխարները կը նկատէ Զորովանից մէջ³: Իսկ Օրբելեան զանոնը 1292ին Հոռոմլայի Հայրապետանոցին մէջ կը զնէ, ուսկից անդամարար գերի կը տարուին Արաբներէն⁴:

1. Օրբէլ. 148. — 2. Արձ. 349. — 3. Վրշ. 116. — 4. Օրբէլ. 324. — 5. Դմտք. 80, 212, 238, 279. — 6. Աւք. 218. — 7. Սրբութ. 589. — 8.

Ագոնց հետ միջին դարէն կը մեծարուէր Լուսաւորչին Աջը, ուսկից Շնորհաւին ողջոյն կը յուր իւր թղթոց մէջ, և կը գործածէր նաև ծեռանդրութեանց առթիւ. և այնուհետև միշտ կը յիշուի այդ սրբութիւնը, երբ 1441ին հայրապետական աթոռը փոխազրուեցաւ յէջմիածին, ըստ կիլիկեան Ժամանակազրին՝ Սոյց հայրապետանոցին մէջ կային Լուսաւորչի, Սեղբեստրոսի, Նիկողայոսի և Պարսամայի աջերը, որոնց զանազան արկածներէ կ'անցնին⁵: Խնդիր չէ նշխարացդ վաւերականութիւնը, որոնց ամէնը կրնան հարազատ չլինել. այլ այն՝ որ այդ բոլոր գարերուն և այդ ամէն մեծամեծար սրբութեանց մէջ թաղէսուի նշխարաց հետքը չկայ: Եւ շատ ուշ՝ 1645ին՝ Առ Դաւրիթեցին իշմիածնի մէջ կը տեսնէր «զաջն թաղէսուի սրբոյ առացելոյն», որ Լուսաւորչի աջոյն հետ կը գործածուէր մեռոնորհնէից մէջ⁶: Առացելոյս ոսկերաց կարծեցեալ յայտնութենէն մինչև հոդ իրը 12 դար անցեր էին. ուր էր մինչև այն ժամանակ այդ առաքելական կարեռագոյն աջը: Վաւերական նշխար մը պահուելու և աւանդուելու էր ձեռքէ ձեռք, և յիշուելու այլոց հետ: Հաւանականութիւն ալ չկայ այդպիսի գանձի մը դրսէն թերուելուն, երբ նկատնենց մեր ազգին այդ շրջանի ցաղաքական ու կրօնական եղկելի պայմանները: Ապա այդ յանկարծերնեաց աջը կեղծիք մ'էր լոկ իմ հաջուվզ, և թաղէսական դատին վերջին ապաւէնքր:

15. Սակայն ի՞նչ խորհելու ենց թաղէի այն գերեզմանին վրայ, որ կայ դեռ այսօր, և հայ եկեղեցւոյ «առացելական սկզբնաւորութեան անհակառակելի փաստերէն» մին կը հոչակուի⁷: Պարզ է: անհակառակելի է, որովհետև կարուտ չէ Հակառակութեան, հիմնովին իսախոս լինելով, և աւանդութեան յետին մէկ գիւտը: Կրնանց ցուցնել նաև թէ ե՛ր մէջտեղ

Դաւր. 820. Բնլպէն կը լինի զեռ այսօր: — 9. Օրման. Ազգա. 29.

ելաւու Արտազ՝ որ նախկին դարերուն եկեղեցականապէս աննշան ու մոռացուած վայր մ'էր, — ափտի ցուցնեմ յետոյ, — աւանդութեան շնորհիւ հետ զհետէ կը սկսի կարևորութիւն ստանալ. և կը տեսնեն՝ որ թ դարու վերջերն « եպիսկոպոսն Գրիգոր Ամատուննաց տանն » հոն փոխադրած է իւր աթոռը. « նստէր ի հանգըստի սրբոյն Թաղէոսի առաքելոյ յԱրտազական զաւաոի», Կ'ըսէ Արծրունեաց պատմչը¹, ուսկից կը հետեւ՝ որ այդ ժամանակ դեռ սեպհական եպիսկոպոս չունէր Արտազ: « ի հանգստի սրբոյն Թաղէոսի՝ աւանդութեան արժագանգն էթ, և ոչ ակնարկութիւն արդէն ծանօթ գերեզմանի մը: Զայս կը հաստատէ նաև Աւունայեցոյն վարմունցը՝ նոյն առաքելոյն աթոռը յԱղուանս տեսնելուն. ապա թէ ոչ՝ օտարաց չէր Բողոքը նա՞ մեր հայրենեաց մէջ յայտնի գերեզման ունեցող առաքելոյն աթոռը: Նմանապէս կիրակոս արկելցին 1269ին կը գրէր իւր Յայսմաւուրին մէջ՝ թէ Թաղէոս « Կատարի նահատակութեամբ յիւսուէէ ի թէմիոն, կախեալ և նետածիգ լեալ յԱրտազ զաւաոի. և կէսց ասեն յԱրմի բաղաց Հայոց»: Ուրեմն մինչեւ հոդ տակաւին անծանօթ ու վիճելի էր անոր հանգըստարանը, Կորսուած յայտնի և անյայտ անուանց բաւզի մը մէջ: Սակայն նոյն վարդապետին Պատմութեան բացարութենէն՝ թէ Կոստանդին կթղ. կը յդէ « քջաբերական նամակ շիրմի առաքելոյն Թաղէոսի՝, զգալի է՝ որ սկսած էին ցոյց տալ արդէն կամ ենթարկել հոն առաքելոյն հանգստարանը:

16. Այդ տեսներն ալ դուրս է եկեղեցերին. և թէ ինչպէս, զիւրին է գուշակել: կը բաւէր աւանդութեան նշանակած վայրին մէջ մատնանշել հաւանական գերեզմանատեղի մը, որպէս զի չեղածը հետ զհետէ լինէր: Այսպիսի կեղծ

գիւտեր մեր օրերն իսկ չե՞ն պատահիր յաճախ: Այդ կարծեցեալ զերեզմանին վրայ եկեղեցի մ'ալ շինուեցաւ, կամ գերեզմանը ցոյց տրուեցաւ Թաղէի եկեղեցոյն մէջ, որ Թուրքերէն աւերելով, 1267ին վերստին կը շինուի՝ մենաստանով մը հանդերձ՝ Համբաւը հոն եպիսկոպոսական հաստատուն աթոռ մ'ալ կը հիմնէ ապա, և անոր առաջնորդը կը նախանան ու կը սկսին ուորիլ: ԺԴ դարու սկիզբաները Արևելեաց պատմչին յաջորդը Յովկաննէս Օրպիլ՝ Շուղթ մ'ունի առ Զաքարիա ծործորեցի եպիսկոպոս նոյն վիճակին, զոր կը սկսի այս շողոմիչ բառերով: « Զգերապատիւ զիլոյդ, սրբազն քաջ հովուակեսիդ, աթոռակալի վերակացուիդ առաքելական աթոռիդ, էքսարիոսիդ Հայոց... նամակ ողջունի և հրամանաց ընկալաց՝ » և այլն: Յովկաննէս քանեցին 1330ի թղթին մէջ լաւագոյն տեղեկութիւնը կու տայ Թաղէի այդ շրջանին արդէն ծանօթ գերեզմանի մասին, բաեւով՝ թէ Ատանայի 1316ի ժողովին մասնակից էր նաև « արհեսպիկոպոսն Զաքարիա՝ որ էր իշխող եկեղեցոյն սրբոյն Թաղէոսի առաքելոյն, ուր կայ գերեզման նորին ի կողմանս արկելեան, յայնկոյս Երասին գետոյն՝ ի սահմանս երկրին Պարթևաց, ոչ հետի ի մեծահոչակ Արարատ լեռնէ՝ »: Այսպէս ուրեմն հազիւ իրը ԺԴ դարու կիսուն կը սկսի ստեղծուիլ և երևան գալ Թաղէի « անհակառակելիյ » գերեզմանը, որուն անպատմականութեան և ալ չեմ հակառակիր:

17. Կատ աղուական է վանական վարդապետի (ԺԴ դար) տեղեկութիւնը, թէ երբ առաքելոց դասուն կողմանէ Թաղէոսի վիճակեցաւ Հայաստանը, « տրտմեցաւ և ասաց. Երկիրն ցուրտ է և մարդիկն բրտարարը »: — և կամ անոր Հարցմանց համեմատ՝ « վասն երկիրն բարձրութեան և մարդոյս անհաւանութեան »: — լին-

1. Արք. 290: — 2. Ասմ. 261: — 3. Յայսմ. յան. լ: — 4. Կիրակ. 174: — 5. Անդ. և որ ապա Կրկին բանդուելով, 1650ին անգամ մ'ալ կը կառու-

ցուի ըստ Պատրիք. 269: — 6. Գրէ. թ. 1261 Ա. Ղար. էլ 128: — 7. Գալանոս, Ա. 517: — 8. Գրէ. թ. 1244 Ա. Ղար. էլ 617:

կերները կը խրախուսեն զինքը, տալով անոր նաև «զեղն օժման՝ զոր Փրիտոս էր օրնեն՝ օգնական, և զգեղարդն»։ Կ'երսկի՝ մին պատսպարան ցրախն դէմ, և միւսը՝ բրտութեան, և որոցմավ ի Հայո եկած կը համարի վարդապետ, թողով զանոնց յիշատակ մեզ, և թէ «յայլ ազգ չկայ այս պարձանքս¹»։ Բայց ստոյզն այն է՝ որ Թաղէսո իւր առաջատար բացա դէպ ի նախասիրած ջերմագոյն երկիրները՝ զոր տեսանց², և շառաւ բնաւ մեր բրտութեան ծայրագոյն փորձը, որուն պանծանօր ենթարկեց զայն հայ աւանդութիւնը։

Անոր թողած յիշատակներն ալ չեն տարրերի առաջելութենքն։ Զուտ երեակական է իւղ օրնենել տալ Յիսուսի, զոր ոչ Փրկիչը խորհեցաւ երրեց, ոչ աւետարանը զրեց, և մեր երկիրը փոխադրել իսկ զեղարդն՝ բատ արտացին բազմաթիւ ու յայտնի վկայութեանց, զորս կը կոչէ Լելերկ՝ Եպիփանիոսէ, սուտ Անտոնինոսէ, թէ։ Դամասկացիէն, Աննա կոմենէ և պլն, Զ-միլ դարերուն Երուսալեմի մէջ կը պահուէր, և միլի վերջերը կը տարուի ի կոստանդնուպոլիս, որ կը մայ ու կը յիշուի ամրողջ Ժիշարուն³։ Հոն գիտէին զայն նաև մերս Մտ. Ռուսացին՝ 1136ին, ու կիրակո՞ 1265ին⁴, որ արեմտեայց հետ կը համարի զայն իսկ՝ որով խոցեցին զՓրկիչն մեր։ Հետևարը Հայաստան դեռ զեղարդ չունի հոդ։

Սակայն որպէս զի նաև այս մասամբ Թոյներէն վար չմայինը, հայ ազգամիւռութիւնը նոյն միջոցին իսկ յիշեալ ողբրութիւնը մեր երկիրը կը փոխադրէ հրաշքով, կոստանդնուպոլիսի մէջ անոր տեղապահ թողով որիշ մ'ըստ Վարդանայ. այն՝ «որով Հրեայցն խոցեցին լնդ կատական զպատկերն փրկական, ուստի ել արին և ջուր՝ որպէս ի կողէն Ցեառն.

(ուրիշ առասպեկ մ'ալ այս)։ և պատուեցաւ զէնն որպէս աստուածամուկին այն՝ զոր Հայոց ունին⁵։ Երենելին Պոօց իշխան 1268 թուին վերջնոյդ նշխարատուփ մ'ալ կը շինէ ու կը պարզէէ Այրիվանից, ինչպէս Կ'իմանանց իւր յիշատակարանէն անոր վրայ⁶։

Գեղարդու ինքն իսկ ցոյց կու տայ իւր ծագումը խաչովը՝ որ տարածուած է տիգին կեղորնը⁷։ Հոռվէմէական նիզակները չէին կարող կրել ցրիտոնէական նշանը, և այն ալ Յիսուսի խաչելութեան ժամանակ, որոյ շնորհիւ և յետ որոյ պիտի սկսէր մեծարուիլ խաչը, Աւրեան միջնադարեան վիճուրի մը զէնցն էր այդ, զոր նախանձայոյց կամ շահասէր մ'առաւ և ընծայեց մեր ազգին զիւրահաւանութեան։ Անոր օժանդակ հասաւ երեակայութիւնը, և Թաղէսոի նուէրն ըրաւ զայն, որուն հաւատացին վանական, վարդան, թաղէի միջնադարեան վկայագիր մը⁸, Գր. Ժաթեացին⁹ և այլք՝ մինչև ցՕրմանեան, որ զայն թաղէական առաջելութեան զօրաւոր փաստերէն մին դրաւ¹⁰։ Առարելութիւն և փաստ Կ'արժեն զիւրահ թաղունք երկուքն ալ, և անցնինց ուրիշ նիւթի։

ԲԱՅԹՈՂՈՄԱՑԻՈՆ. — 1. Երկրորդ քարոզիչն է Հայոց՝ յետ թաղէսոի, և ցան զայն ալ նուազ բախտաւոր պատմացնութեան առջն, որ չի ներեր և ոչ անոր առաջելութեան մեր հողին վրայ։ Հին հայ մատենազրութեան մէջ անոր առաջին յիշատակութիւնը կը գտնենց Խորենացւոյն ցով, այսպէս։ «Բայց վիճակեցաւ Հայոց և Բարդուղմէոս առաքեալ, որ և կատարեցաւ առ մեզ յԱւերանոս քաղաքի¹¹։ իւ Հոփիսիմեանց ճառին մէջ նոյնը Թաղէսոի հետ ցարողիչ կը զորուի ի Հայու¹²։ Պատմահոր զործին մէջ երկցած այս տեղեկութիւնը շատ աղքատ է, և մեր միջնադարեան մատենազրութիւնը ճոխացուց

1. Գր. բարոց, 583. — 2. Ալառ. 228. — 3. Cabrol, VII, 1157-60. — 4. Ալառ. 269. կիրակ. 71. — 5. Վլշ. 111. — 6. Գուրցեց. Ա, 9. — 7. Ալառ. պատ-

4եր 4. — 8. Սոփերց, Ը, 59. — 9. Հարց. Թ, Բ. — 10. Օրման. Ալառ. 34. — 11. Խորեն. Բ, 17. — 12. Նոյն. 809, 316.

զայն, յօրինելով նոյն առաքելոյն վկայութիւնն՝ ալ, որոյ արժէցը պիտի տեսնենց յետոյ: Ըստ կանխաւ՝ ^{թէ} թաղէսոփ առաքելովթեան հաւատացող բոլոր նոր զրիչներն ընդունեցան թարթողոմէսովինն ալ, ինչպէս ընդունած էին միջնադարեան մատենագիրը ևս:

Նուազ բախտաւոր կոչեցի զայն քան զթաղէսոփ թայց եթէ հաւատանք Ազգապատումի հեղինակին, առաքելակցին վրայ կրնայ պարծիւ: Վասն զի, կ'ըսէ նա, « թարթողիմէսոփ Հայոց առաքեալ ըլլալուն և Հայաստանի մէջ նահատակուելուն աւանդութիւնը ընդհանուր է բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու մէջ, այնպէս որ այս մասին բնաւ զժուարութեան հանդիպելու կամ առարկութիւններ լուծելու պէտք չմնար »: Օրմանեան հոս բարեմիտ կրկնութիւնը կ'ընէ Աւագերեանի խօսքին՝ թէ օստար վկայագիրը « միաբանին ընդմեց », թէ թարթողոմէսու յետ քարոզելու Հնդկաց և այլոց՝ « եկն ի Հայաստան աշխարհ, և ի Հայս կատարեցաւ և թաղեցաւ »: Որբան ծանօթ է ինձ, նոր զրիչներէն լոկ Գէորգ Մէկորոպ եղաւ՝ որ կասկած յայտնեց բարթողիմեան աւանդութեան մասին, ըսկելով լակոնարար: « պատմական փաստերով դժուար թէ կարելի ըլլար ապացուցանել »: կասկած մը՝ զոր սրամիտն Գաթրճեան ևս յայտներ էր արդէն, և որ հեռի էր սակայն ըննական հերցումէ մը՝ զոր կը պահանջէր պատմութիւնը:

2. Արդարեկ իրականութիւնը բոլորովին սարքեր է աւանդութեանէն: Արմելեան և արևմտեան եկեղեցեաց ու քան զխորենացին շատ հին և անոր ալ վարդապետ հանդիսացած զրիչներ կը պնդն՝ թէ թարթողոմէսո, ընկեր երկուստանից, Հայաստանի ճանապարհը երրեք չէ սովորած: Անոր քարոզութիւնն « ի Հնդկաս » կը դնեն՝ Եւսերիոս կեսարիայէն՝, ա.

Հերոնիմոս արևմտաքէն՝, և ո. Եփրեմ Ասորիքէն: « Բարթողոմէոս, կ'ըսէ վերջնա, աւետարան զՄատթէոսի ետ Հընդկաց, և եղեւ անզ եպիսկոպոս, և աւետարանեաց ի Լիկայոնիա »:, որ էր Գաղափոյ զաւաներէն մին: Աղոնց ձայնակից են նաև Ռոկերերան, որ կ'ըսէ՝ թէ « թարթողոմէսո զլիկայոնացիս ի ժումկալութիւն հաստատեաց »:, այսինքն քարոզեց ժումկալութեան կրօնը: և Սոկրատ՝ որ կը զրէր իրը 440 թուին, և կը կրկնէր՝ թէ « թարթողոմէսոյ վիճակցաւ Հնդկաստան՝ որ մերձ է յեթիռպահի »: Ամփոփելով այդ վկայից խօսքերը, առաքեալը կը քարոզէ Լիկայոնիոյ, և իւր աթոռը կը հաստատէ Հնդկաց մէջ, որ իւր առացելութեան զլիմաւոր վայրն էր: Արդ՝ Դ-Ե զարերուն Եկեղեցւոյ Հարց ու պատմչաց անծանօթ էր թարթողոմէսոսի ցարոզութիւնը նաև ի Հայս ու մարտիրոսութիւնն անցոմէ: Եւ ինչ որ հնագոյն վկայիցդ օրով չկար, չէր կարող զարեր վերջ լինել պատմական ճշմարտութիւն մը, և զանալ ապրիլ իւր անգոյսթեան զարերուն մէջ: Զեղած պատմութիւնը չի ստեղծուիր, և ստեղծուածը վէպ կը կոչուի:

3. Մեր աւանդութեան դէմ կը գինուին նաև առաքելոյն նշխարները, որ Յունաց ցով կը գտնուէին վաղուց: Անոնց թէուգորսու վերծանող մատենագիրը, որ Զ դարու սկիզբները կը զրէր, կը վկայէ, և Եկեղեցիոր կալմատոս լ դարուն կը կըրկնէ¹³, թէ 508 թուին Անաստաս կայսը Միջագետաց Դարաս քաղաքին մէջ կը կառուցանէ շըեղ եկեղեցի մը. և « զթարթողոմէսո առաքեալ ետես ի ցուն, ասելով յանձն անուլ զպահպանութիւն քաղաքին: Վասն որոյ Անաստաս զնշխարս թարթողոմէսոսի անզը առաքեաց, և ի նմին քաղաքի հրամայեաց դնել¹⁴: Կայսը հոդիւր ձեռաց ներքեւ ունի առաքելոյն նըշ-

1. Ասիերք, թթ. 5. կամ վայուաբուրիւնք, Ա, 200: — 2. Ասու՝ 227: — 3. Օրման. Ազգու. 28-29: — 4. Վարդ սրբոց, Թ, 463: — 5. Գրիգոր. մատուք. 29: — 6. Ասու՝ 227, էն. 17: — 7. Խաեր. Ե, ժ. 1:

8. Զերեւեկ արաց, 36: — 9. Եփրեմ, Ա, 259: — 10. Ի սր. ԺԲ առաքելան. Պ. Գ. 59, էջ 495: — 11. Աւետար, Ա, մը: — 12. Պամ. եկեղ. ԺԶ, լ: — 13. Պ. Գ. 86, Լ, էջ 212:

խարները, որով «անդր առաքեաց», և ոչ թէ Հայաստանին բերել տուաւ, ուր չէր հասներ իւր իշխանութիւնը: Յետոյ ա-նոնց կը փոխադրուին, կ'ըսեն կամիւ և Ազգերեան, Լիպարի կղզին, և անկից ի թնակեան քաղաք, և այժմ կը հանգչին ի Հոռովմ՝ իւր անուան նուիրուած եկե-ցեցւոյն մէջ¹: կը հստեի՞ որ առաքեալը նահատակուեր ու թաղուեր էր Հայաս-տանին հետի, և անոր նշխարները յայտնի ու սեհական էին Յունաց:

4. Ոչ միայն արտաքին մատենագրաց, այլ նոյն ինըն Հայոց լրութեան ևս ան-ծանօթ է թացեր թարթողնձոսի առաքե-լութիւնն իրենց երկիրն ամրոջ Դ-ի դա-րերուն մէջ: Ապացոյց մեր մատենագրու-թեան միահամուռ լրութիւնն անոր մասին, բաց ի Խորենացւոյն՝ որոյ գաղտնիքը պիտի լուծենը յետոյ: Եւ կը սխալին Գել-զեր, Տուռնըրիզ և այլք՝ թաղէականին չափ էին Ենթաքրելով թարթողիմեան ա-ւանդութիւնն ալ՝ առանց փաստի, թէպէտ մերժելով վաւերականութիւնը՝ փաստոս՝ որ քանիցս անզամ յիշեց զթաղէոս և

անոր աթոռը Հայաստանի մէջ, չէ լսեր որ նոյն աթոռին վրայ երկրորդ առա-քեալ մ'ալ բազմեր էր. ապա թէ ոչ յօժարութեամբ և անվրէպ առաջնոյն ցով պիտի զնէր անոր անունը՝ Թաղէականին հետ քարթողումեան ի Հայոց քարոզութեան ևս անտեղեակ էին Ազաթանգեղոս ու Ե-ղիշէ, որոնց կը թուեն առաքելոց ասպա-րէզները²: Զ գարուն Յովհաննէս կաթո-ղիկոս և Ե-ին սկիզբներն Արքահամ կը յիշատակն զթաղէոս իրբե առաքեալ Հայոց³, և զիարթողումէոս ոչ բնաւ, կա-ռելի՞ էր որ լուին, և կամ այն հոգին՝ որ ի չգոյէ կը գոյացնէր, անտեսէր այդ-պիտի թանկագին աւանդութիւն մը՝ եթէ լինէր: Ոչ, մեր նախնից մինչև հոգ օտար-սերէն տարրեր ծանօթութիւն չունէին Հնդկաց առաքելոյն մասին:

(Եարայարելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

1. Vigour. I, 1472. Վարչ սրբոց, թ. 450.—
2. Tourn. 418 և 417. — Յ. Ազթ. 515. Եղիշէ.
345. — 4. Վարչ 260.

Շ Տ Ե - Ո Ղ Ի Ն

ԵՒ

Գ Ն Ո Ւ Ն Ի Ք - Գ Ն Թ Ո Ւ Ն Ի Ք ՈՒ Մ Ե Ն Ո Ւ Ն Ի Ք - Մ Ե Մ Ն Ո Ւ Ն Ի Ք

Վահան Մամիկոնեանը Պարսից Պերոզ արքայի իԵ-տարին Վրաց վահիթանք թա-գաւորի գաշնակութեամբ Շիրակի գաշ-տում ապստամրութեան զրօշակ թարձրա-ցրեց (Պատմացիրք Հայոց. Ղ. Փարպեցոյ Պատմ. Հայոց և բայդ առ Վահան Մա-միկոնեան, Գ. կղ. էջ 118, Տիգիս-Վա-դարշապատ 1904) ուրեմն. 481 թուակա-նին (Th. Noeldeke, Tabari, էջ 435, Leyden 1879):

Հայերը հալածում են մինչև Աստրա-տական, Հայաստանի մարզպան Ասրվը-նասպ Յովմանդեանին, որի նոր զօրքով

վերադարձից յետոյ՝ մղում են Ակոռի ճակատամարտը: Ապա Վահանի կոչի վրայ օգնութեան են հասնում վախթան-զից 300 զննուոր, որոնց ջուտով ես են կանչւում: Խսկ Վասպուրականի շորս երկ-պառակուած նախարարութիւնից Առեստ քաղաքագիւղի 24 Ապրիլ 482 թուակա-նի ճակատամարտից յետոյ (V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, II, էջ 333, ծանօթ. 1. Paris 1869) միայն Անձեւա-ցուց մի մասը և երուանդունից (Փարպ. Գ. Լ.): Այնուհետև Վահանն ինցը վրա-